ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

02.10.2019 թ.

Արձանագրություն թիվ 2

1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2019 թ. օգոստոսի 29-ին հայտարարված մրցույթի վերաբերյալ.

1.1. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արման Ռոբերտի Սիմոնյանն ընտրված է ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

1.2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արմինե Աշոտի Մանվելյանն ընտրված է ՀԱԱՀ Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.3. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արմեն Ստեփանի Մարգարյանն ընտրված է ՀԱԱՀ Գյուղատնտեսական մեքենաշինության, ավտոմատացման և տեխնիկայի շահագործման ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.4. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Սմբատ Հարութի Դավեյանն ընտրված է ՀԱԱՀ Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.5. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Հակոբ Հայկի Խաչատրյանն ընտրված է ՀԱԱՀ Տվյալագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ Հարություն Սամվելի Թամոյանի թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ.

Հարություն Սամվելի Թամոյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտ-ների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ «Խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիները (ՀՀ Վայոց ձորի մարզի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրտենբերգի հողի նյութերով)» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

3. Տաթևիկ Օլեգի Քամալյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

3.1. Տաթևիկ Օլեգի Քամալյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Ընդհանուր քիմիայի ամբիոնում:

3.2. Հաստատել Տաթևիկ Օլեգի Քամալյանի թեկնածուական ատենախոսության թեման «Ոչ ավանդական մեթոդներով քիմիապես մոդիֆիկացված սիլիկահողերի ադսորբցիոն և կատալիտիկ հատկությունների ուսումնասիրությունը» վերնագրով՝ Բ-00.04 «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ, քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

3.3. Գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմական ֆիզիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, քիմիական գիտությունների դոկտոր Պետրոս Սարգսի Ղուկասյանին:

4. Սևդա Բորիսի Մխիթարյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

4.1. Սևդա Բորիսի Մխիթարյանին ձևակերպել որպես ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ընդհանուր քիմիայի ամբիոնի հայցորդ:

4.2. Հաստատել Սևդա Բորիսի Մխիթարյանի Բ-00.04 «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «Մրգահատապտղային կորիզների կեղև¬ներից ստացված բիֆունկցիոնալ ածխային սորբենտների ստացումը և դրանց սորբցիոն հատկությունների ուսումնասիրությունը» թեման՝ քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

4.3. Գիտական ղեկավար հաստատել քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Օ.Ա. Քամալյանին:

5. Լենա Շիրինի Թանգամյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

5.1. Լենա Շիրինի Թանգամյանին ձևակերպել որպես ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ընդհանուր քիմիայի ամբիոնի հայցորդ:

5.2. Հաստատել Լենա Շիրինի Թանգամյանի Բ-00.04 «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «Մետաղ-իոններ աղտոտիչների կլանումը ջրային համակարգից մոդիֆիկացված բնական սորբենտներով» թեման՝ քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

5.3. Գիտական ղեկավար հաստատել քիմիական գիտությունների դոկտոր Լ.Ռ. Հարությունյանին:

6. Արուսյակ Արամի Սիսակյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

6.1. Արուսյակ Արամի Սիսակյանին ձևակերպել որպես ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի հայցորդ:

6.2. Դիմել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գ. Գևորգյանին՝ հաստատելու Արուսյակ Արամի Սիսակյանի Ա-01.02 «Դիֆերենցիալ հավասա¬ումներ, մաթեմատիկական ֆիզիկա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «ՈՒռուցիկ ոչ գծայնությամբ որոշ ինտեգրալ օպերատորների անշարժ կետերի կառուցման հարցեր» թեման՝ ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

6.3. Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Աղավարդի Խաչատրյանին:

7. Արփենիկ Կոլյայի Կռոյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

7.1. Արփենիկ Կոլյայի Կռոյանին ձևակերպել որպես ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի հայցորդ:

7.2. Դիմել ՀԱՊՀ ռեկտոր Ռ.Զ. Մարուխյանին՝ հաստատելու Արփենիկ Կոլյայի Կռոյանի Ա-01.02 «Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «Որոշ դասի փաթեթի տիպի ոչ կոմպակտ օպերատորներով սնվող ինտեգրալ հավասարումների լուծելիության հարցեր» թեման՝ ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

7.3. Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աղավարդ Խաչատուրի Խաչատրյանին:

8. Մետաքսյա Հովնանի Ավետիսյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ.

8.1. Մետաքսյա Հովնանի Ավետիսյանին ձևակերպել որպես ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի հայցորդ:

8.2. Դիմել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գ. Գևորգյանին՝ հաստատելու Մետաքսյա Հովնանի Ավետիսյանի Ա-01.02 «Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «p-ադիկ լարերի տեսության որոշ ոչ գծային ինտեգրալ հավասարումներ» թեման՝ ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

8.3. Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Աղավարդի Խաչատրյանին:

9. **Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերի հաշվետվությունների վերաբերյալ.**

9.1 Հաստատել թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող «Անսահմանափակ տիրույթներում որոշ ոչ գծային եզրային խնդիրների լուծելիության հարցեր» թեմայով գիտական ծրագրի (18T-1A004) տարեկան հաշվետվությունը և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու համար:

9.2. Հաստատել թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող «Ավտոմոբիլի գազամոտորային վառելիքի շահագործական ծախսի նորմավորումն ըստ շարժման ռեժիմների» թեմայով գիտական ծրագրի (18A-2k10 ծածկագրով) հաշվետվությունը և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու համար:

9.3. Հաստատել թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող «Հողակոշտերի ռոտորային մանրիչով կարտոֆիլահանի մշակում և պարամետրերի հիմնավորում» թեմայով գիտական ծրագրի (18A-4e09 ծածկագրով) հաշվետվությունը և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու համար:

9.4. Հաստատել թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող «Համայնքների խոշորացման պայմաններում հողաշինարարական ռեսուրսների օպտիմալացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ» թեմայով գիտական ծրագրի (18A-4e08 ծածկագրով) հաշվետվությունը և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու համար:

10. ՀԱԱՀ 2020 թվականի գնումների վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

11. ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներին անվանական կրթաթոշակներ հատկացնելու, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում անվանական կրթաթոշակների լրացուցիչ 2 տեղ հատկացնելու, ինչպես նաև անվանական կրթաթոշակների համար հատկացվող ամսական գումարն ավելացնելու վերաբերյալ.

11.1. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել անվանական կրթաթոշակ.

1. Խուրշուդյան Քրիստինե Համլետի՝ ՀՇ 5-րդ կուրս՝ Ի. Եղիա¬զարովի անվան:
2. Ղազարյան Արտակ Արմենի՝ ՀՇ 5-րդ կուրս՝ Ա. Խանջյանի անվան:
3. Ավետիսյան Տիգրան Լևոնի՝ Էլ. 5-րդ կուրս՝ Ա. Մա¬թևոս¬յանի անվան:
4. Էլբակյան Վոլոդյա Լեռնիկի՝ ՃԵԿ 5-րդ –կուրս՝ Ս. Սահակ¬յանի անվան:
5. Գրիգորյան Արման Ռազմիկի՝ ԳՄԱ 4-րդ կուրս՝ Հ. Մաք¬սա-պետյանի անվան:

11.2. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել անվանական կրթաթոշակ.

1. Սարգսյան Մարիամ՝ ԱԷկ 4-րդ կուրս՝ Ա. Քոչինյանի անվան:
2. Գասպարյան Ասյա՝ ՀՀ 4-րդ կուրս՝ Ա. Մարգարյանի անվան:
3. Դաջունց Սոնա՝ ՖԿ 3-րդ կուրս՝ Բ. Մարտիրոսյանի անվան:
4. Համբարձումյան Անահիտ՝ ԱՔԽՏ 3-րդ կուրս՝ ՀԱԱՀ գիտական խորհրդի կրթաթոշակ:

11.3. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել անվանական կրթաթոշակ.

1. Նիկոյան Կորյուն Արտաշեսի՝ գ/կ սելեկցիա. գենետիկա և կենսատեխնոլոգիա 3-րդ կուրս՝ Ա.Զ. Թամամշևի անվան:

2. Թումասյան Աննա Պետրոսի՝ անասնաբուժական սանիտարական փորձաքննություն 4-րդ կուրս՝ Ա.Ա. Ռուխկյանի անվան:

11.4. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել անվանական կրթաթոշակ.

1. Ղազարյան Անի Ազատի՝ ՊՓ 4-րդ կուրս՝ Վ.Ե. Թաիրովի անվան:

2. Մանուկյան Գոհար Մանուկի՝ ՏՓԹ 3-րդ կուրս՝ Զ.Խ. Դիլանյանի անվան:

11.5. Ագրոնոմիական ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել անվանական կրթաթոշակ.

1. Ղարախանյան Կարեն Արթուրի՝ ԱԷ 4-րդ կուրս՝ Գ.Խ. Աղաջանյանի անվան:

2. Հարությունյան Եվա Կարապետի՝ ՍԳ 4-րդ կուրս՝ Ա.Գ. Թումանյանի անվան:

11.6. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ուսանողների անվանական կրթաթոշակների թիվը 2-ից դարձնել 4: Մյուս երկու թեկնածությունները քննարկել գիտական խորհրդի հաջորդ նիստի ժամանակ:

11.7. ՀԱԱՀ ուսանողների անվանական կրթաթոշակի գումարը սահմանել ամսական 15.0 հազ. դրամ:

ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ